

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԽԱԼ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ - ՂԱՐԱԲԱՂ ԵՒ ՆԱԽԻՋԵՒԱՆ

Ատրպեյնամի Սոցիալիստական հարերդային Հանրապետութեան Յեղկոմի Դեկլարացիայի եւ Հայաստանի եւ Ատրպեյնամի Սոցիալիստական հարերդային Հանրապետութիւնների կառավարութիւնների մէջ եղած համաձայնութեան հիման վրայ յայտարարում է, որ Լեռնային Ղարաբաղը այժմեանից կազմում է Հայաստանի Սոցիալիստական հարերդային Հանրապետութեան անբաժան մասը:

Այս պաշտօնական հրովարտակը, որուն լուսապատճէնը կը հրատարակենք թիւ 106 վարը, գրուած է երեք լեզուներով, - հայերէն, ռուսերէն, թաթարերէն - հետեւեալ ստորագրութեամբ. «Հայաստանի Սոցիալիստական հարերդային Հանրապետութեան Ժողովների հարերդի մարտագահ Ա. ՄԻԱՄՆԻԿԵԱՆ եւ Բարտաղար Մ. ՂԱՐԱԲԵԿԵԱՆ, 12 Յունիս 1921, Երևան»:

Ղարաբաղը Հայաստանի վերամիացնելու յայտարարութիւնը կը գտնենք նաեւ «Սովետական Հայաստան» պաշտօնաթերթի 19 Յունիս 1921ի թիւ 106 համարին մէջ, ուր կ'ըսուի. «Հայաստանի Սոցիալիստական (Կոմունիստական) Հանրապետութեան» Ժողովրդական կամ (Խորհրդների) հարերդ: Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կցուած: Համաձայնութեամբ Ատրպեյնամի յայտարարութեան»: Ստորագրութիւն՝ Ա. ՄԻԱՄՆԻԿԵԱՆ:

Հոս կ'ուզենք յիշատակել նաեւ երրորդ փաստաթուղթի մը գոյուցիւնը, որ կը վերաբերի Նախիջևանին: Յայտարարութիւնը տպուած է 3 Դեկտեմբեր 1920ի Ատրպեյնամի մայրաքաղաք Պաքուի «Կոմունիստ» պաշտօնաթերթի թիւ 164 համարին մէջ, հետեւեալ խորագիրով. «Ձանգեգուրը եւ Նախիջևանը Հայաստանին տրուելու մասին Դեկլարացիա, կարգացուած Պաքուի Պատգամ. հարերդի համախառն միստում»:

Վերի երեք պաշտօնական փաստաթուղթերուն բնագիրները կը պահուին Երևանի Պատմագիտական Թանգարանին արխիւներուն մէջ:

Երբ այս շրջանին հայ ժողովուրդը, ի Հայաստան եւ ի սփիւռս, միահամուռ կերպով կը պահանջէ հայկական Ղարաբաղին եւ Նախիջևանին վերադարձուիլը իր բուն տիրոջ՝ Հայաստանին եւ հայ ժողովուրդին, ճիշդ կ'ըլլայ սկսիլ մեր պահանջը յիշեցնելով, որ այդ հողամասերուն ճակատագիրը արդէն որոշուած եւ վճռուած էր 1920-21ին, համաձայնութեամբ՝ այդ օրերու սովետական պատասխանատուներուն եւ իշխանութեանց: Որոշում մը՝ որ սակայն ցարդ չէ գործադրուած վրդովեցուցիչ պատճառաբանութիւններով:

Հոս պատմականը պիտի չընենք Ղարաբաղին եւ Նախիջևանին, փաստելու մտօք անոնց գոտ հայկական նկարագիրը: Խմբագրական սխեմակին անյարիր են պատմական բնոյթի երկար գրութիւնները եւ ակնարկները, որոնք արդէն զանազան ձեւերով լոյս տեսան մեր թերթին մէջ բացատրողական քարտէսներով: Թող որ պէտքը չունինք մենք մեզի փաստելու վերոյիշեալ հողամասերուն հասկացող հայապատկան հեռաւոր թէ մօտաւոր անցեալը, ինչպէս կարիքը չունինք մենք մեզ համոզելու, որ 1915ի Յեղասպանութիւնը սարսափելի իրողութիւն մըն է: Ամէն ոք դիտէ, որ Նախիջևանը, մեր Գողքը եւ Ղարաբաղը, մեր Սիւնեաց աշխարհին եւ Արցախին մաս կազմող հողամասը հոմանիչն իսկ են Հայաստան կոչուած երկրին:

Ղարաբաղի եւ Նախիջևանի ինքնավար շրջաններուն Սովետական Ատրպեյնամի իշխանու-

Ազրբեյձանի Սոցիալիստական Կոմունիստական Հանրապետութեան Յեղկոմի ղեկավարացիայի եւ Հայաստանի ու Ազրբեյձանի Սոցիալիստական Կոմունիստական Հանրապետութիւնների մէջ եղած համաձայնութեան հիման վրայ յայտարարում է, որ Լեռնային Ղարաբաղը այժմեանից կազմում է Հայաստանի Սոցիալիստական Կոմունիստական Հանրապետութեան անբաժան մասը:

Հայաստանի Սոցիալիստական Կոմունիստական Հանրապետութեան Ժողովների հարերդի մարտագահ Ա. ՄԻԱՄՆԻԿԵԱՆ (Ա. Մաթոսի)

Բարտաղար Մ. ՂԱՐԱԲԵԿԵԱՆ

Թեանց յանձնուելը 1920ին եւ 1924ին արդիւնքն է բազմաթիւ ազդակներու, որոնք ոչ մէկ աղերս ունին արդարութեան եւ պատմական իրաւունքին հետ: Նախիջևանը անցք մըն էր փանթուրանական աշխարհակալութենէ առաջնորդուած Թուրքիոյ ղեկավարներուն համար, հասնելու՝ Անգլիոյ օրհնութեամբը՝ Պաքուի նաւթհորերը, ու անկէ տարածուելու համար մինչեւ Միջին Ասիոյ տափաստանները, մինչեւ Մոսկովիա: Հայաստանը խցան մըն էր, որ պէտք էր անհետանար: Ո՛չ համայնավար յեղափոխութիւնը, ո՛չ Ս. Միլիտարիւնը այդ շրջանին կրցան փրկել Նախիջևանը, նոյնիսկ երբ Զօր. Անդրանիկ իր հինգ հազար զինուորներով հոն մտաւ պահպանելու համար տեղւոյն հայութիւնը ստոյգ կոտորածէ եւ 14 Յունիս 1918ին, հեռագիրով, Ստեփան Շահումեանին յայտնեց, թէ Նախիջևանը կը յայտարարէ Սովետական Ռուսաստանին անբաժան մասը եւ իր ջոկատը կը դնէ Մոսկուայի տրամադրութեան տակ: 1924ին Ստալին Ատրպեյնամին նուիրեց արդէն ինքնավար դարձած Նախիջևանը, ոտնակոխելով ոչ միայն արդարութիւնը, այլ նաեւ Սովետական Միութեան յստակ օրէնքներն իսկ, որոնց համաձայն ամէն ինքնավար հանրապետութիւն որ կը գտնուի միութեանական հանրապետութեան մէջ, պէտք է ենթարկուի անոր: Արդ, Նախիջևանը կը գտնուի Հայաստանին մէջ եւ ոչ մէկ սահմանագիծով կը միանայ Ատրպեյնամին:

Հայկական Ղարաբաղի ինքնավար շրջանը սկիզբը ենթարկուեցաւ Պաքուի, տեղի տալով Ատրպեյնամական գրոհող ուժերու առջեւ, եւ ասպա ան ալ մտաւ իր նաւթարդիւնաբերութեամբ շատ կարեւոր նկատուած Ատրպեյնամի իշխանութեան տակ: Թէ՛ Նախիջևանի եւ թէ՛ Ղարաբաղի իշխանութեանց փոփոխութիւնը չեղաւ խաղաղութեամբ կամ կամովին: Երկու շրջաններուն հայ բնակչութիւնը ջարդուեցաւ, թալանուեցաւ, բռնաբարուեցաւ թաթար բարբարոս զօրքերուն կողմէ, եւ ամբողջ հայկական դիւղեր անբեւութացան:

Ասիկա երէկ էր. այսօր շատ աւելի վարդապետն չի թուիր պարզուած պատկերը: 1913ին

На основании декларации Ревкома Социалистической Советской Республики Азербайджана и соглашения между Правительством Советских Социалистических Республик Азербайджана и Армения о Карабахском вопросе объявлено, что Нагорный Карабах отныне является неотъемлемой частью Социалистической Советской Республики Армении.

Председатель Совета Народных Комиссаров С. С. Р. Армения А. МЯСВИШОВ (Аз. Мартуня) Секретарь Ш. НАРАБЕГЯН

12 июня 1921 г. Эривань.

Հայաստանի Սոցիալիստական Կոմունիստական Հանրապետութեան Ժողովների հարերդի մարտագահ Ա. ՄԻԱՄՆԻԿԵԱՆ եւ Բարտաղար Մ. ՂԱՐԱԲԵԿԵԱՆ, 12 Յունիս 1921, Երևան

Armenian Republic
Armenian Republic
Armenian Republic

12 June 1921

Նախիջևան նահանգի բնակչութեան 80 տոկոսը հայեր էին, այսօր մնացած են 1.5 տոկոսը, այսինքն հազիւ 6000 հոգի՝ 250,000 հոգի հաշուող ներկայ հողամասին վրայ: Ատրպեյնամցիները, որոնք ծագումով եւ լեզուով թուրքեր են - այլ խօսքով «ատրպեյնամցի» ազգ գոյութիւն չունի - մոլեգին լծուած են հայութենէ պարպուած հողամասին վրայ ջնջելու ամէն հայկական պատմական, մշակոյթի եւ արուեստի հետքերը, ճիշդ այնպէս՝ ինչպէս կ'ընեն Թուրքիոյ իրենց հայրենակիցները: Նախիջևանի 5500 քառակուսի քիլոմետր տարածքին վրայ գոյութիւն ունին 25,000 խաչքար, 600 եկեղեցի եւ պատմական յուշարձան, որոնք այսօր ծրագրուած կերպով կ'աւերուին ու կը քանդուին վանտալական արարքներով: Ու դեռ ամէն տեսակ սեղմումներ կ'ըլլան, որ մնացեալ հայերն ալ հեռանան շրջանէն:

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեան տոկոսն էր 95 առ հարիւր, այսօր ան դարձած է 80 առ հարիւր: 4400 քառակուսի քիլոմետր տարածութեամբ հողամասին 168,000 բնակիչներուն 150,000 հոգին հայեր են: Հոս ալ կը տիրէ ատուութիւնը այն ամէն ինչի դէմ որ հայկական է: Որպէս «ազգայնական» կը հալածուին բոլոր անոնք, որոնք ուղղակի կամ անուղղակի կ'ուզեն փրկել հայ մշակոյթի գանձերը: Քոմիսի միջոցներով կ'արգելուի շրջանի տնտեսութիւնը: 1965ին, 50,000 ստորագրութեամբ, դարաբաղցիները Մոսկուա դիմեցին, որ ինքնավար հանրապետութիւնը Հայաստանին միանայ: Դիմումը գործնականապէս մնաց ապարդիւն, սակայն ստորագրողներէն շատեր անձնապէս տուժեցին, ուրիշներ ստիպողաբար հեռացան երկրէն: Այս նկիւն միջոցորտին դիտաւոր դարբինն էր Ալիեւը, որ շրջան մը Ատրպեյնամի Չեկայի պատասխանատուն էր, եւ որ յետոյ Պրեժնեկի օրով մաղլցեցաւ մինչեւ փոլիթպիւրօ, ուրկէ ան այս տարի հեռացուեցաւ: Ազատասէր Ղարաբաղցին, որ հայոց պատմութեան մէջ հանրածանօթ է իր արիութեամբ եւ ռազմական ձիրքերով, իր Դաւիթ Բեկերեւի եւ մելիքներով, կը դիմանայ եւ դիւրաւ չի ձգեր իր պապենական երկիրը, սակայն մինչեւ ե՞րբ: